ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«07» մայիսի 2010 թ. N------Ն

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՊԱՏՎԻՐԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Երևանի քաղաքապետի առաջարկությունը և ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 52-րդ հոդվածի 4-րդ մասով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 219.1-րդ հոդվածով սահմանված՝ 43.1-րդ հոդվածի 3-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ մասերով, 114-րդ, 162-րդ, 169.1-րդ, 169.16-րդ և 180-րդ հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննելու և վարչական տույժ նշանակելու Երևանի քաղաքապետի լիազորությունները պատվիրակել Երևան քաղաքի վարչական շրջանների ղեկավարներին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ «ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՊԱՏՎԻՐԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 96-րդ հոդվածի համաձայն՝ վարչական շրջանի ղեկավարը առևտրի և սպասարկման բնագավառում տալիս է համապատասխան թույլտվություններ և ապահովում այդ թույլտվությունների համար սահմանված տեղական տուրքերի գանձումը: Երևանի ավագանու 2010 թվականի մարտի 18-ի N 71-Ն որոշմամբ Երևանի վարչական շրջանների ղեկավարներին առևտրի, ծառայությունների բնագավառում պատվիրակվել են նաև Երևանի քաղաքապետի այն լիազորությունները, որոնք կապված են համապատասխան թույլտվություններ տալու և դրանց համար սահմանված տեղական տուրքերը գանձելու հետ: Ավագանու նույն որոշմամբ Երևանի վարչական շրջանների ղեկավարներին պատվիրակվել է գույքահարկի և հողի հարկի գանձման կազմակերպման և իրականացման լիազորությունները:

Հիմք ընդունելով Երևանի վարչական շրջանների ղեկավարների վերը շարադրված լիազորությունները և /կամ/ պարտականությունները, հաշվի առնելով, որ առևտրի, ծառայությունների և սպասարկման բնագավառում գործունեություն իրականացնող, ինչպես նաև գույքահարկ և հողի հարկ վճարող սուբյեկտների հաշվառումն իրականացվում են Երևանի վարչական շրջանների ղեկավարների կողմից՝ նպատակ ունենալով ապահովելու նշված լիազորությունների առավել արդյունավետ իրականացումն ու դրանով պայմանավորված թույլտվություն տվող և հարկերը գանձող մարմնի կողմից զանցառուներին պատասխանատվության ենթարկելու անհրաժեշտությունը, նպատակահարմար է վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 162-րդ հոդվածով /ոչ սահմանված տեղերում առևտուր անելը/, 169.1-րդ հոդվածով /հաշվապահական հաշվառումը /գրանցումը/ խախտումով վարելը, երբ դա կարող է առաջացնել /առաջացրել է/ հարկի կամ պարտադիր սոցիալական ապահովության վճարի նվազեցում, կամ հայտարարագիրը /բացառությամբ ֆիզիկական անձանց գույքի և եկամուտների հայտարարագրի/ հաշվարկը սահմանված ժամկետում չներկայացնելը/ և 169.16-րդ հոդվածով /առևտրի, հանրային և կենցաղային սննդի ոլորտում առանց համապատասխան թույլտվության գործունեություն իրականացնելը/ նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննելու և վարչական տույժ նշանակելու Երևանի քաղաքապետի լիազորությունները պատվիրակել Երևանի վարչական շրջանների ղեկավարներին:

Ինչ վերաբերում է վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 43.1 հոդվածի 3-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ մասերով /աղբահանության աշխատանքները ժամանակին չկազմակերպելը, չսահմանված վայրերում աղբ թափելը, աղբահանության

համար անհրաժեշտ պայմաններ չապահովելը/, 114-րդ հոդվածով /արգելված տեղերում անասուններ պահելը/ և 180-րդ հոդվածով /լռության խախտումը հասարակական վայրերում/ նախատեսված վարչական իրավախախտումներին, ապա դրանց վերաբերյալ գործերը քննելու և վարչական տույժ նշանակելու լիազորության փոխանցումը վարչական շրջանների ղեկավարներին պայմանավորված է նշված բնագավառներում ներկայումս վարչական շրջանների ղեկավարների կողմից իրականացվող գործառույթների բնույթով, ինչպես նաև Երևանի քաղաքապետի կողմից քննվող վարչական գործերի ծավալը նվազեցնելու անհրաժեշտությամբ: